ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ԱԶԳՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Posted on March 19, 2015 by Keghart

Category: Opinions

Մարտ 19, 2015

- Խնդրանք Խմբագիրներուն
- Բաց Նամակ ՀԲԸՄ-ին
- Անհաւատալի՝ Բայց Իրաւ...

Պատուարժան Խմբագիրներ
Հայաստանեան Եւ Սփիւռքի Մամուլի,

Կը խնդրենք որ այս կցուած յօդուածը ձեր թերթին մէջ տպէք առ ի գիտութիւն հայ հանրութեան:

Յօդուածը շատ յստակ կերպով ցոյց կու տայ որ խումբ մը սրտցաւ հայեր, որոնք մտահոգ են ազգային կրթութեամբ, կ'առաջարկեն իրենց ծախսերով վերանորոգել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, վերաբանալ զայն եւ իրենց վրայ վերցնել Հաստատութիւնը մատակարարելու բոլոր ծախսերը եթէ եւ երբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական վարչութիւնը համաձայնի:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը պիտի վերածուի «Համահայկական» գիշերօթիկ վարժարանի, ուր աշխարհի բոլոր կողմերէն ուսանողներ պիտի գան եւ Եւրոպական մակարդակով բարձր ուսման կողքին պիտի ստանան հայեցի դաստիարակութիւն եւ սորվին Արեւմտահայերէն լեզուն: Մանրամասնութիւններուն տեղեակ կրնաք ըլլալ յոդուածին պարունակութենէն:

Մարտ 19, 2015

- Խնդրանք Խմբագիրներուն
- Բաց Նամակ ՀԲԸՄ-ին
- Անհաւատալի՝ Բայց Իրաւ...

Պատուարժան Խմբագիրներ
Հայաստանեան Եւ Սփիւռքի Մամուլի,

Կը խնդրենք որ այս կցուած յօդուածը ձեր թերթին մէջ տպէք առ ի գիտութիւն հայ հանրութեան:

Յօդուածը շատ յստակ կերպով ցոյց կու տայ որ խումբ մը սրտցաւ հայեր, որոնք մտահոգ են ազգային կրթութեամբ, կ'առաջարկեն իրենց ծախսերով վերանորոգել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, վերաբանալ զայն եւ իրենց վրայ վերցնել Հաստատութիւնը մատակարարելու բոլոր ծախսերը եթէ եւ երբ Հայկական

Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական վարչութիւնը համաձայնի:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը պիտի վերածուի «Համահայկական» գիշերօթիկ վարժարանի, ուր աշխարհի բոլոր կողմերէն ուսանողներ պիտի գան եւ Եւրոպական մակարդակով բարձր ուսման կողքին պիտի ստանան հայեցի դաստիարակութիւն եւ սորվին Արեւմտահայերէն լեզուն: Մանրամասնութիւններուն տեղեակ կրնաք ըլլալ յոդուածին պարունակութենէն:

Կը հաւատանք որ հայ մամուլը մեր նոր սերունդի հայեցի դաստիարակութեամբ եւ Արեւմտահայերէն լեզուի պահպանութեամբ մտահոգ է: Վստահ ենք որ Հայաստանի մամուլի խմբագիրները առիթ պիտի ունենան Հ.Բ.Ը.Միութեան պատկան մարմիններուն հետ հանդիպելու, երբ անոնք Երեւան գտնուին Ապրիլ 4-ին Միութեան 88-րդ Համագումարին առիթով: Կը խնդրենք որ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու հարցը արծարծէք Համագումարի մասնակիցներուն հետ եւ առաջարկէք որ եթէ Հ.Բ.Ը.Միութիւնը տրամադիր չէ Հաստատութիւնը վերաբանալու նիւթական պատճառներով, զայն յանձնէ անոնց՝ որոնք տրամադիր են եւ նիւթական կարողութիւնը ունին զայն մատակարարելու:

Ձեր ազգանուէր առաքելութեան կը մաղթենք ամէն յաջողութիւն:

Կահխայայտ Շնորհակալութեամբ՝

Զօհրապ Շամմասեան, Ատենապետ
Համաշխարհային Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան
28002 Via Congora
Mission Viejo, CA 92692, USA
E-Mail: zohrabs@cox.net
Tel 949 855 2015

Համաշխարհային Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան անդամներն են:

Մասիս Տէր Փարթող, Կիպրոս
Բժ. Յարութիւն Զատիկեան, Լիբանան
Բժ. Րաֆֆի Պետիկեան, Գերմանիա
Գառնիկ Տէրտէրեան, Անգլիա (Ատենադպիր)
Արա Գուլեան, Գանատա
Բժ. Յարութիւն Մեսրոպեան, ԱՄՆ
Րաֆֆի Ցնծալեան. ԱՄՆ
Արտէն Շէլէֆեան, Զուիցերիա
Թալին Ուզունեան Աւագեան. Զուիցերիա
Արթօ Արթինեան, Թայլէնտ
Զոհրապ Շամմասեան, ԱՄՆ (Ատենապետ)

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանին,
Պատկառելի Կեդրոնական Վարչութեան Անդամներուն,
Մասնաճիւղերու Վարչութիւններու Անդամներուն
եւ Միութեան 88-րդ Համագումարին Մասնակցող Պատգամաւորներուն

Ազնուամեծար Տիկիններ,
Մեծայարգ Պարոններ,

Այս «Բաց Նամակ»ով կ'ուզենք ձեր ազնիւ ուշադրութեան յանձնել վերջերս հայ մամուլին մէջ լոյս տեսած Վարդգէս Գուրուեանին «Անհաւատալի Բայց Իրաւ, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Կրնար (եւ տակաւին կրնայ) 21-րդ Դարու Համահայկական Ամենակարեւոր Դպրոցին Վերածուիլ» յօդուածը:

Այս առիթով կը խնդրենք եւ կ'առաջարկենք որ բարի ըլլաք Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու հարցը օրակարգի նիւթ դարձնել Հ.Բ.Ը.Միութեան 88-րդ Համագումարին (General Assembly) որ պիտի գումարուի Երեւանի մէջ, Ապրիլ 4, 2015-ին:

Արեւմտահայերէնի եւ Արեւմտահայութեան գոյատեւման մեր գոյապայքարին մէջ, անհրաժեշտ է որ Մելգոնեան Կրթական Հաստատութեան նման հաստատութեան մը ճակատագիրը որոշուի համահայկական մակարդակի վրայ եւ ոչ թէ քանի մը անձերու որոշումով:

Ցեղասպանութեան 100 ամեակի համազգային բոլոր միջոցառումները կը նսեմանան եւ իրենց լրջութենէն մասամբ կը պարպուին եթէ հիմնական եւ արմատական միջոցներու չդիմենք եւ Արեւմտահայերէնն ու Արեւմտահայութիւնը ստոյգ կորուստէ փրկելու գործընթացին չսկսինք:

Կը հաւատանք որ Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացումը եւ անկէ ջամբուաելիք հայագիտական ուսումը եւ ոգին ամենակարեւոր միջոցառումներէն մին է Արեւմտահայերէնի եւ Արեւմտահայութեան փրկութեան գործընթացին մէջ:

Վստահելով որ մեր առաջակը պիտի արժանանայ ձեր բարեհաճ նկատառման, մեր Մեծ Միութեան 88-րդ Համագումարին կը մաղթենք ամէն յաջողութիւն:

Կանխայայտ Շնորհակալութեամբ՝

Զոհրապ Շամմասեան, Ատենապետ
Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ
Համաշխարհային Միութեան

Յ.Գ. Կը կցենք վերեւ յիշուած յօդուածը

Անհաւատալի՝ Բայց Իրաւ...
Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը
Կրնար (եւ տակաւին կրնայ) 21-րդ Դարու Համահայկական Ամենակարեւոր Դպրոցին Վերածուիլ

> ***Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացումը, Արեւմտահայերէնի գոյատեւման համար ռազմավարական նշանակութիւն ունի: Զայն փակ պահելով պիտի նպաստենք Արեւմտահայերէն լեզուի կորուստին:***
> ***Վարդգէս Գուրուեան***

Ծանօթ.
«Մելգոնեան Կրթական Հաստատութեան Միջազգային Սանուց եւ Բարեկամներ» կազմակերպութիւնը (2005-ին հիմնուած Զուիցերիոյ մէջ) անվերապահօրէն զօրվիգ կը կանգնի այս յօդուածին եւ կ'որդեգրէ հոն արտայայտուած գաղափարները: «Այբ Կրթական Հիմնադրամ»ին հարցազրոյցի պատճէնը յօդուածագրին տրամադրուած է մեր կողմէն: Կը յուսանք որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութիւնը եւ անոր նախագահ Տիար Պերճ Սեդրակեանը լրջօրէն նկատի կ'ունենան հոն արտայայտուած գաղափարները եւ կը սկսին դրական քայլեր առնել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու կամ անոր տնօրինութիւնը յանձնելու «Այբ Կրթական Հիմնադրամ»ին:
Զոհրապ Շամմասեան - Ատենապետ
«Մ. Կ. Հ. Միջազգային Սանուց եւ Բարեկամներ»
Կազմակերպութեան

Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմքի վրայ 21-րդ դարու Համահայկական համաշխարհային բարձրագոյն մակարդակով դպրոց մը հիմնելու եւ Մելգոնեանի վերաբացումի հարցը լրջօրէն քննելու համար, «Այբ Կրթական Հիմնադրամ»ը, որ կը նպատակադրէ միջազգային կրթական բարձր մակարդակով հայկական դպրոցներ հիմնել, իր ժողովներուն մէջ լրջօրէն քննած է Մելգոնեանը նման դպրոցի մը վերածելու ծրագիրը: Այս խումբի անդամները մինչեւ անգամ այցելած են Մելգոնեան, դիմած են Հ.Բ.Ը.Միութեան եւ առաջարկած՝ որ **իրենք ստանձնեն Մելգոնեանի վերաբացումի եւ մատակարարման բոլոր ծախսերը:**

Մարտ 19, 2010-ին Երեւանի մէջ գումարուեցաւ շատ բարձր մակարդակի խորհրդաժողով - ասուլիս մը, որուն կը մասնակցէին Տէր Մեսրոպ Քհն. Արամեան («Այբ» Կրթական Հիմնադրամի Նախագահ, Հայաստանէն),Արդէն Շելեֆեան (գործարար, բարերար՝ Զուիցերիայէն), Կարապետ Տաքէսեան (ՄԿՀի նախկին փոխ Տնօրէն, Ֆրանսայէն), Աշոտ Ասլանեան եւ Մարտիրոս Մինասեան (Կիպրոսէն): Սփիւռքեան մեր պայմաններուն լաւ ծանօթ ազգայիններու համար շատ յստակ է որ

Արեւմտահայերէնը հոգեվարքի մէջ է, եւ թէ որեւէ հայ դպրոցի փակում աւելի եւս կը սրէ այս տագնապը:

Չակերտներու մէջ առնուած միտքերը ասուլիսի անդամներուն միտքերն են: Կարգ մը տեղեր ես փորձած եմ որոշ գաղափարներ զուգորդել Մելգոնեանի մեր կեանքին եւ ներկայ իրականութիւններու հետ:

Այսպէս...

«Այսօր չկան արդի դարաշրջանի շնչին եւ զարգացումներին համապատասխան դպրոցական գործող համակարգեր Հայաստանում եւ Սփյուռքում...: Լինելով աշխարհով մէկ սփռված ժողովուրդ՝ հայ ժողովուրդը չունի միասնական պատկեր եւ գիտակցություն, թէ ինչպիսի՞ կրթական համակարգ է ինքն ուզում ունենալ, որ մի կողմից համապատասխանի այսօրվա համաշխարհային չափանիշներին եւ մյուս կաղմից էլ համապատաասխանի ազգ լինելու հանգամանքին: ...Այս սերունդն ի՞նչ ունի փոխանցելու հաջորդ սերնդին, որովհետեւ եթե մենք որեւէ բան չունենք փոխանցելու հաջորդ սերունդը բարոյազրկվում է... Այլ կերպ ասած՝ ***մեր ազգի գոյատեւման խնդիրը 21-րդ դարի բուռն զարգացումների մեջ, կրթական զարգացումների մեջ համախմբվելն է կրթության առանցքի շուրջ: ...Այդ մտահոգությունից ծնունդ է առել Սփյուռքում միջազգային հայկական դպրոց ստելղծելու ծրագիրը: Բոլորիս համար ակնյայտ է որ Մելգոնյան Կրթական Հաստատությունն իր բազմամյա հարուստ ավանդով, իր շրջանավարտների հսկայական փաղանգով, իր աշխարհագրական շատ բարենպաստ տեղակայութեամբ ունի լավագույն հիմքերը, հնարավորությունները, որպեսզի այդ միջազգային հայկական դպրոցն իրագործվի այդ տարածքի, այդ հիմքի վրա:***»

Ահաւասիկ ոչ Մելգոնեանցի պատասխանատու անձնաւորութիւններու կարծիքով, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը ամենայարմար վայրն է ուր կարելի է ստեղծել համահայկական կրթութեան կեդրոնը, մտքի կաճառը, լուսոյ տաճարը: Չմոռնանք, **համահայկական** բառը: Ոչ միայն Սփիւռքի, այլ ամբողջ հայութեան:

Բնականաբար Մելգոնեանը վերաբանալու համար հսկայական նիւթական ներդրումներու կարիքը կայ: Ուրկէ՞ պիտի գան այդ հսկայական գումարները:

«Նախաձեռնող խումբը միավորում է զանազան գործարարների Կիպրոսից, Շվեցարէայից, Ռուսաստանից եւ Հայաստանից, որոնք ունեն լրջագույն տրամադրվածություն եւ որոշում ներդրում կատարելու Մելքոնյան կրթական հաստատության վերաբացման պարագայում: ... ե՛ւ կան ներդրում անելու պատրաստակամություն ունեցող մարդիկ, ե՛ւ կան կրթության գիտակ կազմակերպություն, անհատներ, որոնք պատրաստ են այսօր նոր բովանդակություն մատակարարել դպրոցի վերաբացման պարագայում:»

«Բավականին լուրջ դրամական հիմք այսօր վերաբացման համար ես կարծում եմ, որ ապահովված է: Անմիջապես, երբ որ մենք համաձայնությունը ստացանք, մենք պատրաստ ենք վերանորոգման աշխատանքներն այնտեղ սկսել:» (Տէր Մեսրո

«Մելգոնեանը հույսի դուռ էր մեր երիտասարդների համար:»

Մելգոնեանը սփիւռքի գաղութները եւ Հայրենիքը իրարու միացնող հաստատութիւնն էր: Հոն ուսանելու կուգային սփիւռքի զանազան գաղութներէն եւ Հայաստանէն հայ պատանիներ: Այնտեղ Լիբանանահայը կը հանդիպէր Յունահայուն, Սուրիահայը՝ Եգիպտահայուն, Իրաքահայը՝ Պարսկահային, Քուէյթահայը՝ Պուլկարահայուն, Պոլսահայը՝ Հայաստանցիին, Երուսաղէմահայը՝ Ֆրանսահային, եւայլն: Այսպէսով, նոյն յարկին տակ, սփիւռքի զանազան գաղութներէ եւ Հայաստանէն ու Ղարաբաղէն եկող հայորդիները կ'եղբայրանային իրարու, եւ Մելգոնեանի մաքուր շունչով վերամկրտուելով կը զինուէին հայութեամբ, եւ վերադառնալով իրենց գաղութները, կը նուիրուէին հայակերտման սրբազան պայքարին:

«***Դա (ՄԿՀ) սփյուռքեան կյանքի մեջ ունի մեծ ավանդ**, իբրեւ կրթության մակարդակ: Հիմա կան որոշ բաներ կյանքի մեջ, որ չեն կարող վաճառել: Այսինքն՝ Ֆրանսան չի կրնար Սորբոնը վաճառել: Կան սրբութիւններ, որոնք պետք է պահպանվին եւ պետք է ավելի արդիական դառնան:»*

«***Մելգոնյանի տված կրթությունն ունեցել է շատ բարձր մակարակ**, շրջանավարտներն ընդունվել են Օքսֆորդ, Քեմբրիջ, Հարվարդի համալսարան, աշխարհի լավագույն համալսարանները: Դա միջազգային չափանիշներով շատ բարձրորակ կրթական հաստատություն է եղել: **Ինքն եղել է մեր լավագույն կրթական հաստատություններից մեկը**:»*

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1995-2004 կրթաշրջաններու Հոգաբարձական Կազմի Ատենապետ Պրն. Սարգիս Պուչաքճեանի Հաստատութեան ամավերջի հանդէսին կարդացած տեղեկագրէն կարտատպենք հետեւեալ հաստատումները.- «2003-ի Հաստատութեան 27 շրջանաւարտներուն մօտ 50 տոկոսը մասնակցած են University of London-ի «A Level»ի նուազագոյն երկու քննութիւններու եւ բոլորն ալ յաջողած են: Հինգ (5) ուսանողներ մասնակցած են 5 «A Level»ի քննութիւններու եւ իրենց բարձր նիշերուն պատճառաւ իրաւունք ստացած են յաճախելու Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներու լաւագոյն համալսարանները, ինչպիսին են Օքսֆորտը, Քէյմպրիտճը, Հարվըրտը, Եէյլը, Սթենֆորտը, Էմ.Այ.Թի.ն: ... «A Level»ի քննութիւններուն իր ստացած բարձր նիշերուն պատճառաւ, Թամար Ճուրեանը արժանացած է «**Fulbright Scholarship**»ին եւ «**British Council Gold Medal**»ին: Վրոյր Գափրիէլեանը Կիպրոսի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով շահած է «**Cambridge University highest achievement in IGC S E exams in Cyprus**» պատիւը: ... 1995 - 2004 տարիներու շրջանաւարտներուն 90 տոկոսը յաճախած են Ամերիկեան եւ Եւրոպական բարձրագոյն համալսարանները: ... Մելգոնեան Կրթական Հաստատութեան Կրթական Ծրագիրը համազօր է Անգլիական եւ Եւրոպական կրթական ծրագիրներուն: ... 2004-ին Մ. Կ. Հաստատութեան աշակերտութեան թիւն էր 251:»

Ըստ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ատենի Փոխ Նախագահ Տիար Հայկաշէն Ուզունեանին, Հաստատութեան պիւտճէն հաւասարակշռուած էր (ա) Հաստատութեան հողին վրայ կառուցուած կալուածի եկամուտներէն, (բ) Կիպրոսի կառավարութեան պետական օգնութիւնէն, (գ) Կիպրոսի պետութեան կողմէ 50 կիպրացի աշակերտներու համար վճարած լման կրթաթոշակներէն, (դ) Կիպրոսի պետութեան կողմէ վճարուող երեք ուսուցիչներու ամսականներէն, (ե)

Հաստատութեան մարզական դաշտերուն (ֆութպոլ, թենիս, պասկեթպոլ, վոլիպոլ) վարձքերէն եկած եկամուտներէն, (զ) աշակերտներէ գանձուած կրթաթոշակներէն, (է) բարերարներու կողմէ հաստատուած կրթաթոշակներէն, (ը) Մելգոնեան Բարերար եղբայրներու հաստատած Հիմնադրամի եկամուտներէն: Մ.Կ.Հաստատութեան Հոգաբարձական Կազմի Ատենապետ Պրն. Սարգիս Պուչաքճեան նոյնպէս կը հաստատէ որ հաստատութեան պիւտճէն հաւասարակշռուածէր: Տակաւին, կարելի է Հաստատութեան հողատարածքին վրայ եկամուտաբեր նոր շէնքեր կառուցել եւ աւելի եւս եւ աւելիով ապահովել Հաստատութեան պիւտճէի հաւասարակշռումը:

Ա. Շելեֆեանի միտքերէն (Զուիցերիահայ գործարար, բարերար)

*«Ի՞նչ էր Բարեգործականի պատրվակը՝ աշակերտ չկա, հայ ուսումը հոս տեղը տեղ չունի... Եթե դուք ուզում եք մի հաստատություն ուժեղացնել եւ դարձնել արդիական, դուք աշակերտ կգտնաք, բայց եթե դուք չեք էլ հետաքրքրված դպրոց ղեկավարելու, ուրեմն՝ դուք ամեն միջոց կձեռնարկեք որ այդտեղ նոր աշակերտ չգա... **Այսօր իրենք ասում են՝ մենք հետաքրքրված չենք ուսում տալու, այսինքն՝ Բարեգործանանն ինքը չի ուզում այդ գործը: Մենք ասում ենք իբր հայ կազմակերպություն, որ մենք այդ նախաձեռնությունը կարող ենք ստեղծել, իրենց հետ պայմանագիրներ անելով՝ այդ ուսումը գետնի վրա դնելու: Մենք պատրաստ ենք**։»*

Ուրեմն... մարդիկը պատրաստ են Մելգոնեանը վերանորոգելու, արդիականացնելու, միջազգային բարձր կրթական մակարդակով դպրոցի վերածելու, պիւտճիէ բեռը իրենց վրայ առնելու, պայմանաւ որ Բարեգործականը բարի ըլլայ Մելգոնեանը տրամադրելու այս մարդոց:

«Մենք բացարձակապէս հետաքրքրված չենք, որ դա լինի մեր սեփականությունը, Բարեգործականը թող դա տա տնօրինման այն մարդկանց, ովքեր հետաքրքրված են կրթությամբ, կարող են ներդնել, կարող են որակյալ բովանդակությամբ մատուցել։»
Տէր Մեսրոպ, նախագահը «Այբ Կրթական Հիմնադրամ»ին կը վստահեցնէ որ «բավականին լուրջ դրամական հիմք այսօր վերաբացման համար ես կարծում եմ, որ ապահովված է։»

Բայց այս «Ապագայի Դպրոց»ը ի՞նչ նկարագիր պիտի ունենայ: Բացի շատ բարձրորակ ուսում ջամբելէն, ինչո՞վ պիտի տարբերի միւս հարիւրաւոր հայկական դպրոցներէն:
Կարդանք Տեր Մեսրոպ Քահանայ Արամյանի ծրագիրը:

«Ապագայի դպրոց»-ում երեխան լինելու է ոչ թե գիտելիքների յուրացման պասիվ օբյեկտ, այլ մասնակից: Կյանքի պետք է կոչվի նաեւ պրոֆեսիոնալ ուսուցչի գաղափարը, այսինքն՝ ուսուցիչ, ով առավոտվանից մինչ երեկո դպրոցում է, ով սովորեցնում ու սովորում է միաժամանակ։»

Մելգոնեանը ըլլալով գիշերօթիկ վարժարան, մեծ թիւով ուսուցիչներ կալուածին վրայ կ'ապրին, ուսուցիչներու յատուկ բնակարաններու մէջ: Այս ուսուցիչներէն շատեր հերթապահութեան պաշտօններ ալ կը վերցնեն, եւ շատ կը շփուին աշակերտներու առօրեային հետ: Նուիրեալ ուսուցիչներու գուրգուրանքին տակ հասակ առնող պատանին շատ աւելի հասուն եւ պատրաստուած դուրս կու գայ Հաստատութենէն, քան թէ ոչ գիշերօթիկ վարժարան յաճախող տղան:

«Դպրոցը պետք է լինի հայ դպրության ավանդույթների եւ արդի կրթական տեխնոլոգիաների համադրում: Այսինքն՝ երբ մեկը մտնում է դպրոց, սկսած ճարտարապետությունից, ամեն տեսակ սիմվոլիկ լուծումներից, որոնք արտահայտված են այդ մէջավայրում, պետք է զգա ավանդույթի շունչը, պետք է զգա, որ ինքը ինչ-որ մի բանի կրիչն է եւ ժառանգորդը: »

Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջապատը իր «ճարտարապետական սիմվոլիկ լուծումներով» այդ «ավանդույթի շունչը» կը փոխանցէ աշակերտին: Դպրոցին մուտքէն կը սկսի այդ խորհրդաւոր վեհութիւնը: Լիմասոլի մայր ճամբէն երբ կը մտնենք Մելգոնեան, բլրան գագաթին կը հանդիպինք Աղա Կարապետ եւ Աղա Գրիգոր Մելգոնեան եղբայրներու դամբանին: Ճերմակ մարմարով, քանդակներով եւ ուժի ցուցադրիչ հիւսուածքներով բարձրացած, Մելգոնեան եղբայրներու կիսանդրիները խորհրդաւոր լրջութեամբ բայց բարեակցական ժպիտով կը դիմաւորեն եւ բարիգալուստ կը մաղթեն քեզի: Շէնքերու առջեւ բացուող պուրակները կարծես զիրենք ցանող որբերուն լեզուներով բարիգալուստ կը մաղթեն քեզի եւ կը յուշեն որ «ազգիդ վրէժը լուծելու չմոռնաս...» Կան տակաւին հայ մտաւորականներու եւ հերոսներու քանդակները, որոնք քեզ կը կապեն մեր պատմութեան միտքին եւ բազուկին: Իր դաշտերով, իր ծառուղիներով, իր գրադարանով, իր արուեստանոցներով եւ հանդիսասրահով եւ այլ բազմապիսի առաւելութիւններով, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը է՛ եւ կը մնա՛յ մեր ազգին ապագայի լաւագոյն սերունդները պատրաստող տիպար Հաստատութիւնը:

Սերունդէ սերունդ մեզի կը հասնէին պատմութիւնները Մելգոնեանցիներու անցեալի յաջողութիւններուն, տղոց հերոսութիւններուն, մարզական, կրթական, գեղարուեստական, երգչախումբի, պարախումբի եւ այլ բնագաւառներու յաղթանակներուն: Ոսկեշղթայ յուշերը անցեալի մշուշի մէջէն կուգային մեր հոգիները պարուրելու հայ տղոց երազներով: «Կիլիկիա» երգը կը յուզէր մեզ: Իրաքանչիւրս կ'ուզէինք «Թորոս Լեւոնի»ն ըլլալ եւ երթալ Կիլիկիան ազատագրելու: Հայերէնի թէ Հայոց Պատմութեան դասերու ժամանակ, գրական – գեղարուեստական հանդէսներու թէ հայրենիքէն ժամանած արուեստագէտներու ելոյթներուն, մեր մէջ կը բոցավառէին Հայրենիքի կրակը, մեր նահատակներուն կանչն ու վրէժը, մեր հերոսներուն սխրագործութիւններն ու ազգային աւանդութիւններուն համանուագը:

«Դպրոցում գործելու են ճոխ գրադարան...արվեստանոցներ եւ երաժշտական ստուդիաներ, սպորտային խմբեր, երգչախմբեր, ցուցասրահներ, կարիերայի եւ հոգեբանական պատրաստության կենտրոններ: ... զարգացնելու ենք մարդու գրելու եւ խոսելու ունակությունները...ուզում ենք հավաքել համայնքաստեղծման կարեւորագույն էլեմենտները եւ դպրոցը դնել որպես համայնքի կենտրոն...Համայնքը դպրոցում պետք է ներկա լինի դպրոցական ակումբների (գրական, մշակութային), սպորտային միջոցառումների...»

«Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը իր գիշերօթիկի հանգամանքով, տասնամեակներ շարունակ պատրաստած է հայեցի արժէքներով օժտուած հպարտ սերունդներ: Գիշերօթիկի պայմաններուն մէջ սերունդներ շարունակ կազմաւորուած են որպէս լաւ հայերէն գիտցող տղաք: Մեծ է թիւը Մելգոնեանցի նուիրեալ ուսուցիչներուն, տնօրէններուն, խմբագիրներուն, արուեստագէտներուն, նկարիչներուն, երաժշտագէտներուն, գրագէտներուն, ակադեմիկոսներուն,

քաղաքական գործիչներուն ... ՄԿՀ-ի ճոխ գրադարանը ... Շաբաթական գրական-գեղարուեստական հանդէսներով, արտասանական, երգ ու պարի մրցումներով, երգչախումբով, պարախումբով, թատերական ներկայացումներով, վիճաբանական ելոյթներով այս աշակերտները պիտի վարժուին նաեւ բեմի կեանքին...Զանազան աշակերտական «խմբակ»ներու միջոցաւ (ՀԲԸՄիութեան աշակերտական մասնաճիւղ, աշակերտական խորհուրդ, գրական, պատմական, մարզական, թատերական, երգչախումբի եւ այլ յանձնախումբերով) Մելգոնեանցիները պիտի մարզուին նաեւ ժողովական կեանքին եւ կանոններուն եւ պիտի կարենան իրենց քաղաքներուն մէջ վերակազմակերպել գաղութային օղակները...» (Յօդուածը ամբողջութեամբ կարդալ www.melkonianforever.org կայքին վրայ:)

Եւ գիտենք որ գաղութը միշտ ներկայ էր Մելգոնեանի գեղարուեստական թէ մարզական միջոցառումներուն, ինչպէս Մելգոնեանը ներկայ էր գաղութի կարեւոր ձեռնարկներուն:

Հայելի պատկերը՝ կատարեալ, երազային դպրոցին:

Գալով Արեւմտահայերէն լեզուի պահպանման՝ «*Արեւմտահայերեն լեզուն լիազորված է պահպանման Եվրախորհրդով Կիպրոսի մէջ: Այսօր օրենքով Եվրոպառլամենտն ընդունել է, որ արեւմտահայկական լեզուն պետք է պահպանվի, եւ Կիպրոսը լիազորված Է, երաշխվորված է, որ այդ բանը պետք է տեղի ունենա:...Ինչու՞ ենք փակում, ինչպէ՞ս կարելի է փակել այդ գանձը: Արեւմտահայկական լեզուն պետք է պահպանվի Սփյուռքում: Եվ դա (ՄԿՀ) եղել է համար մեկ ուսումնական հաստատություն: ... Մենք դարձել ենք միջազգային ժողովուրդ... մենք պետք է պահպանենք սփյուռքյան իրականությունը՝ ուժեղացնելու համար հայրենիքը: Արեւմտահայերեն լեզուն եւ իր սպեցիֆիկը Հայաստանի մեջ կարող չէ լինելու, Հայաստանն ունի իր լեզուն...*»

«***Քանի որ մեր ժողովրդին 2/3-ը կապրի Սփյուռքի մեջ, մեր միակ երաշխիքը դպրոցն է: Մելգոնյանը պարզապես գումարի կամ շենքի եւ այլնի հարց չէ, այլ՝ մեր գոյության համար ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ նշանակություն ունեցող խնդիր:***»

«***Մելգոնեանը մեր գոյութեան համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր***» է:

Այս հաստատումը ահաւոր նշանակութիւն ունեցող եւ խիստ կարեւոր ճշմարտութիւն է: «Ազգապահպանում» բառը այնքան կրկնուած է որ կարծէք պարպուած է իր իմաստէն: Հոս սակայն մեր «գոյութեան» հիմնահարցը դրուած է ամենայն պատասխանատուութեամբ եւ ծանրութեամբ:

Այսօր «**պատերազմական վիճակ**» գոյութիւն ունի Արեւմտահայերէնի պաշտպանութեան մարզին մէջ: Եթէ կը հաւատանք մեր Ազգի գոյութեան, ուրեմն կը հաւատանք, ստիպուած ենք հաւատալ որ **Արեւմտահայերը մէկ անբաժան մասն են Հայ Ազգին**: Հետեւաբար ոեւէ բանիմաց հայ գիտէ որ լեզուն, Արեւմտահայերէնը, հիմնական վահանն է, ամրոցն է Արեւմտահայութեան: **Արեւմտահայերը եւ Արեւմտահայերէնը պահպանելու, պաշտպանելու համար հրամայական պահանջը է որ ամբողջ Ազգը ոտքի կանքնի եւ պաշտպանէ Արեւմտահայութիւնը, հետեւաբար՝ Արեւմտահայերէնը:**

Կարելի՞ է երեւակայել Հայաստանը առանց Սփիւռքի: Եթէ Սփիւռքը մեռնի, Հայաստանի ապագան շատ կը տժգունի, շատ կը վտանգուի: Եթէ Արեւմտահայերէնը մեռնի (ինչ որ հոգեվարքի մէջ է հիմա),

շուտով պիտի մեռնի նաեւ Արեւմտահայութիւնը:

Հայաստանի եւ Սփիւռքի ներկայ ղեկավարութեան առաջնահերթ պարտականութիւնը պէտք է ըլլայ փրկել Արեւմտահայութիւնը փրկելով Արեւմտահայերէնը: **Ազգային ռազմավարութեան կեդրոնական խնդիրներէն մին պէտք է ըլլայ Արեւմտահայերէնի պահպանութիւնը:**

«*Թուրքերը բացել են արտասահմանում 1000ից ավելի դպրոց վերջին 20 տարվա ընթացքում: 1000 դպրոց՝ 110 երկրի մեջ եւ իրենց այդ դպրոցներու ցանցի նյութական հնարավորությունները 25 միլիարդրդ դոլար են: Այսօր թուրքը Փարիզի սրտում կառուցում է դպրոց եւ ֆրանսացիներին բերում է սովորեցնում է թուրքական մշակույթ եւ թորքերեն լեզու*:»

Թուրքը արտասահմանի մէջ աւելի քան 1000 դպրոց ունի, 25 միլիարդ տոլար պիւտճէով: Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ տասնեակներով «Չարթըրտ» դպրոցներ ունի (12 դպրոց միայն Քալիֆորնիոյ մէջ),մեր, հարկատուներուս տոլարներով մատակարարուած... Մե՞նք... մեր միակ գիշերօթիկ դպրոցը կը փակենք:

Տեր Մեսրոպ կ'առաջարկէ «***Եկեք կրկին վերարթնացնենք մեր հայրերի ոգին, որպեսզի շարունակենք իսկապես որպես լիարժեք ժողովուրդ***:»

Կ'ուզենք **ՅՈՒՍԱԼ** որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատկառելի Կեդրոնական Վարչութիւնը եւ անոր նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանը **ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ Կ'ԵՐԹԱՐԿԵՆ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակուած պահելու իրենց որոշումը եւ կարելի փութով կը վերաբանան զայն**:

Լոս Անճելըս, Քալիֆորնիա